



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

ARCHBISHOP TORKOM MANOOGIAN, PRIMATE

Մարտ 18, 1982

Թորոնթոյի մեր հաւատացեալներուն,

Խորունկ մտահոգութեամբ է որ ձեզի կ'ուղղենք մեր խօսքը, նկատի առնելով
հարցին կարեւորութիւնը մեր հաւատացեալ ժողովուրդին եւ թեմին համար:

1979 տարուան կիսուն, Գանատայի Թորոնթօ քաղաքի նորակազմ Ս. Խաչ Եկե-
ղեցին որպէս համայնք ընդունելէ առաջ, մենք եւ թեմական խորհուրդը Ս. Խաչ
Եկեղեցւոյ ծխական խորհուրդի անդամներուն յստակ կերպով բացատրեցինք որ
Հիւսիսային Ամերիկայի Հայց. Եկեղեցւոյ Առաջնորդարանի կանոնադրութեան
բոլոր տրամադրութիւնները պէտք է յարգուին համայնքի վարչականներուն կողմէ:
Ծխական խորհուրդը ստորագրութեամբ հաւանեցաւ յիշեալ կանոնադրութեան հաւա-
տարմօրէն ենթարկուիլ, եւ մենք ու թեմական խորհուրդը ընդունեցանք որ Ս.
Խաչ Եկեղեցւոյ համայնքը մաս կազմէ Առաջնորդարանի իշխանութեան ներքեւ
գործող եկեղեցիներուն, եւ հաստատեցինք ծխական խորհուրդի անդամներու նը-
շանակումը:

Ըստ Առաջնորդարանի որդեգրած սկզբունքներուն, 1980 թուականին համար թե-
մական տուրք սահմանեցինք Ս. Խաչ Եկեղեցւոյ համայնքին՝ համաձայն թեմական
Պատգամաւորական ժողովին կողմէ ընդունուած բանաձեւին, եւ Ս. Խաչ Եկեղեց-
ւոյ համայնքին կողմէ Առաջնորդարանին ներկայացուած տեղեկագիրներու հիման
վրայ:

1980 թուականին, Թորոնթոյի Ս. Խաչ Եկեղեցւոյ ծխական Խորհուրդը, առանց Առաջնորդին եւ Թեմական Խորհուրդի գիտութեան, գրաւոր կերպով տեղեկութիւն ուզած է Գանատայի Տուրքերու Բաժանմունքէն՝ Առաջնորդարանին վճարուելիք տուրքերու օրինաւորութեան մասին, աւելցնելով նաեւ որ այսպիսի նիւթական փոխանցում մը մէկ երկրէն միւսը գանատական բարեսիրական հաստատութիւններուն համար կրնայ հակաօրինական արարք նկատուիլ ՝ Գէնէտիրն ինզամ Թաքս Աքթի կողմէ: Այդ նամակը գրողներու դիտումը պարկեշտ չենք գտներ: Անոնք Գանատայի բոլոր չայ Եկեղեցիներու տուրքէ զերծ ըլլալու գոյավիճակը կասկածելի ներկայացուցած են, Գանատայի Տուրքերու Բաժանմունքին ուղղուած իրենց նամակին մէջ մասնաւորաբար ակնարկելով անոնց մասին եւս, եւ ըսելով.

Պրականութեան մէջ, մենք չենք կարծեր որ գանատական որեւէ բարեսիրական հաստատութիւն որեւէ օգուտ կը ստանայ նիւ Եորք դրկուած տուրք-տուարներու հաշւոյն: Եւ այս՝ ամբողջովին անճիշդ հաւաստում մըն է:

Մենք անձնապէս, եւ Թեմական Խորհուրդին հետ, փորձեցինք բացատրել Ս. Խաչ Եկեղեցւոյ համայնքի վարչականներուն որ իրենց այս արարքը իմաստուն քայլ մը չէ, եւ խնդրեցինք որ ետ կենան այս հարցը աւելի հետապնդելէ:

Առաջնորդարանի օրինական հարցերու խորհրդատուն գրեց Գանատայի Տուրքերու Գրասենեակը՝ բացատրելով մեր Թեմական կառոյցը եւ Առաջնորդարանի դիրքը նկատմամբ իր համայնքներուն, եւ տուաւ յաւելեալ տեղեկութիւններ՝ Առաջնորդարանի կողմէ իր համայնքներուն տրամադրուած եւ մատուցուած ծառայութիւններուն մասին: Գանատայի Տուրքերու Բաժանմունքը իր պատասխանին մէջ տեղեկացուցած է. ՝ Եթէ Առաջնորդարանի վճարուած տուրքերը մատուցուած ծառայութեանց փոխարէն են՝ Տուրքերու Օրէնքներուն կողմէ ընդունելի են: Թորոնթոյի Ս. Խաչ Եկեղեցին է որ պէտք է յայտարարէ այս իրողութիւնը:

Երբ Ս. Խաչ Եկեղեցւոյ համայնքի վարչականները անդրդուելի մնացին իրենց տեսակէտին վրայ, մենք եւ Թեմական Խորհուրդը հարցը իր բոլոր մանրամասնութիւններով ներկայացուցինք Թեմական Պատգամաւորական ժողովին՝ զումարուած 1981 Մայիսին, եւ Պատգամաւորական ժողովէն թելադրութիւններ խնդրեցինք: Թեմական Պատգամաւորական ժողովը զանցառու նկատեց Ս. Խաչ Եկեղեցւոյ համայնքը, որ չվճարելով իրեն սահմանուած տուրքերը՝ նովին իսկ զործով ոտնահարած է Թեմական Կանոնադրութիւնը: Առաւել, Թեմական Պատգամաւորական ժողովը զանցառու ընթացքին մէջ գտաւ Ս. Խաչ Եկեղեցւոյ համայնքը՝ որ ոտնահարած է Թեմական Կանոնադրութեան ոգին: Թեմական Պատգամաւորական ժողովը պարտականութիւն յանձնեց մեզի եւ Թեմական Խորհուրդին՝ աւելի մանրամասնութեամբ քննելու հարցը եւ առնելու անհրաժեշտ նկատուած որոշումները:

Նամակներու եւ հեռաձայնային խօսակցութեանց միջոցաւ կրկին փորձեցինք տարհամոզել Ս. Խաչ Եկեղեցւոյ ծխական Խորհուրդը՝ հարցերու մօտեցման իրենց ընթացքը փոխելու համար: Զանազան առիթներով, մենք եւ Թեմական Խորհուրդի ներկայացուցիչները թորոնթօ եկանք՝ հանդիպում ունենալու համար Ս. Խաչ Եկեղեցւոյ համայնքի վարչականներուն հետ, ջանալով լուծում մը գտնել յարուցուած հարցին առնչութեամբ: Սակայն այս բոլոր փորձերը ձախողեցան:

Ս. Խաչ Եկեղեցւոյ համայնքի վարչականները չեն վճարած իրենց Թեմական տուրքերը՝ Առաջնորդարանի իշխանութեան ներքեւ զործող համայնքներուն մաս կազմելէն ի վեր --1979--, բացի մէկ առիթէ մը՝ երբ Ս. Խաչ Եկեղեցւոյ համայնքի անունով Առաջնորդարան ղրկուած է 1,000 --մէկ հազար-- տուար ծխական Խորհուրդի վարձած փաստաբանին կողմէ ՝՝որպէս բարիկամեցողութեան արտայայտութիւն՝, համայնքին ունեցած պարտաւորութեանց հաշւոյն: Ս. Խաչ Եկեղեցւոյ համայնքի վարչականներուն այս ընթացքը բոլորովին անընդունելի եւ Հայց.

Եկեղեցւոյ աւանդութեանց հակառակ գտանք: Մեր Առաջնորդարանի Պատմութեան մէջ աննախընթաց երեւոյթ մըն էր այս: Եւ փաստաբանին վերադարձուցինք 1,000 --մէկ հազար-- տուարի փոխզիրը՝ ըսելով որ Առաջնորդարանը սովորութիւն չունի իր համայնքներուն հետ ունեցած իր հաղորդակցութիւնը վճարուած միջնորդներու միջոցաւ կատարելու:

Ս. Խաչ Եկեղեցւոյ համայնքի վարչականներուն եւ ծխականներուն հետ՝ յարուցւած հարցին տրամաբանական լուծում մը գտնելու մտադրութեամբ, վերջին փորձ մը եւս կատարեցինք, եւ մենք ու Թեմական Խորհուրդը հրահանգեցինք ծխական Խորհուրդին որ Կիրակի Փետրուար 21, 1982ին համար ծխական Անդամական Բացառիկ Ժողովի մը հրաւիրէ Ս. Խաչ Եկեղեցւոյ համայնքը: Դժբախտաբար, Ս. Խաչ Եկեղեցւոյ համայնքի վարչականները համագործակցութեան ոգի ցոյց չտուին եւ համայնքի հասցէները չտրամադրեցին եւ Հոգեւոր Հովիւը չկրցաւ Թորոնթոյի Ս. Խաչ Եկեղեցւոյ համայնքի քուէարկելու իրաւունք ունեցող բոլոր անդամներուն հրաւէր ուղղել: Այդ պատճառաւ, քիչ թիւով հաւատացեալներ ստացան մեր հրաւէրը, ժողովի օրակարգը եւ ներփակեալ բացատրական տեղեկագիրը՝ համայնքին մէջ ստեղծուած կացութեան մասին: Այս ծխական Անդամական Բացառիկ Ժողովի օրակարգին մէջ մասնաւորաբար կար հետեւեալ առաջարկը.՝ Թեմական Խորհուրդը կ'ակնկալէ եւ կ'առաջարկէ որ ծխական Անդամական Ժողովը հրահանգէ ծխական Խորհուրդին՝ 1. հաւատարմօրէն ենթարկուիլ Թեմական Կանոնադրութեան, 2. զործադրել Առաջնորդին եւ Թեմական Խորհուրդի հրահանգները, 3. լրիւ վճարել Թեմական Պատգամաւորական Ժողովին կողմէ որոշուած ծխական տուրքերը՝: Թեմական Խորհուրդէն երեք անդամներ իբրեւ լիազօր ներկայացուցիչներ նշանակուեցան մեր եւ Թեմական Խորհուրդին կողմէ, վերեւ յիշուած ծխական Անդամական Բացառիկ Ժողովին որպէս նախագահ, Ատենապետ եւ Ատենադպիր:

Ս. Խաչ Եկեղեցւոյ համայնքի այս Բացառիկ ժողովը Առաջնորդարանի ներկայացուցիչներուն համար եղաւ այնպիսի փորձառութիւն մը, զոր կը նախընտրեն մոռնալ: Ս. Խաչ Եկեղեցւոյ համայնքի վարչականները նախ պնդեցին իրաւագրկել Առաջնորդարանի ներկայացուցիչները՝ ղեկավարելէ իրենց գործերը, այն անհիմն առարկութեամբ որ Առաջնորդն ու Թեմական Խորհուրդը որեւէ իշխանութիւն չունին ծխական Անդամական Բացառիկ ժողով մը գումարել տալու եւ վարելու:

Ի վերջոյ, ժողովի ընթացքին երբ Առաջնորդարանի ներկայացուցիչներուն պատեհութիւն տրուեցաւ իրենց պաշտօնները ի գործ դնելու, Ս. Խաչ Եկեղեցւոյ համայնքի վարչականները եւ ծխական Խորհուրդի կարգ մը անդամները իրենց անարգական եւ խոտվարար ընթացքով ստիպեցին Առաջնորդի եւ Թեմական Խորհուրդի ներկայացուցիչները հեռանալու ժողովասրահէն: Առիթը չտրուեցաւ որ օրակարգի մասնաւոր առաջարկը Խորհրդածուծեան նիւթ իսկ ըլլայ եւ քուէարկուի Անդամական ժողովին կողմէ:

Ստեղծուած այս կացութեան մէջ, Առաջնորդարանի ներկայացուցիչներուն կը մնար ցաւով յայտարարել յատենի ժողովոյ որ 1982, Փետրուար 21-էն սկսեալ Թորոնթոյի Ս. Խաչ Եկեղեցւոյ համայնքը լուծուած է՝ համաձայն Առաջնորդի եւ Թեմական Խորհուրդի կողմէ իրենց տրուած հրահանգին:

Որոշած ենք նաեւ հետեւեալ անհատները զրկել մեր թեմին մէջ քուէարկող անդամի եւ վարչական պաշտօններու համար ընտրուելու եւ նշանակուելու առանձնաշնորհումէն, մինչեւ 1987 Փետրուար.

Արմէն Քիւրքճեան
Տոքթ. Ա. Վարդան Այնաճեան
Ղեկնող Շահմելիքեան
Ժիրայր Հանրմեան


Մեր հրահանգն է նաեւ, սիրելի հաւատացեալներ, որ դուք չմասնակցիք եկեղեցական որեւէ արարողութեան՝ հովանաւորուած կամ կազմակերպուած Թորոնթոյի լուծուած Ս. Խաչ Եկեղեցւոյ անունով:

Մենք գիտենք որ դուք հաւատարիմ անդամներն էք Հայց. Եկեղեցւոյ եւ Հիւսիսային Ամերիկայի Առաջնորդարանին: Սիրելի հաւատացեալներ, ձեզի հանդէպ մեր ունեցած հոգածութեան իբր հետեւանք, մենք որոշած ենք Թորոնթոյի մէջ վերակազմակերպել մեր համայնքը: Եւ նշանակած ենք Արժշ. Տ. Յուսիկ Քրնյ. նշանեանը հոգատարելու համար մեր ժողովուրդի հոգեւոր կարիքները, իսկ Գրիգոր Սրկ. Զմրութեանը նշանակած ենք ծուխին Հոգեւոր Մատակարար, մեր կողմէ նշանակուած ծխական Խորհուրդի մը հետ ընթացք տալու մեր համայնքի գործերուն:

Մենք կը յուսանք որ դուք, որպէս Հայց. Եկեղեցւոյ հաւատաւոր անդամներ, պիտի համախմբուիք նշանակուած ծխական Խորհուրդին շուրջ, եւ պիտի կառուցանէք նոր ու խաղաղ հոգեւոր տուն մը՝ ձեզի ու ձեր զաւակներուն համար:

Թող Տէրը օրհնէ ձեզ ու ձեր ընտանիքները, եւ ձեզ հաստատ պահէ մեր նախահայրերու հաւատքին մէջ:

Սիրոյ ողջունիւ



ԹՈՐՐՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

